

ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆԻՆ

(Երեսնամեակի առթիւ)

Մեղմիկ հնչեց անապատում  
Կախարդական քո քնար  
Եւ հրաշքով՝ վեհ, անպատում,  
Ողի առան սար ու քար:  
Խոպան ձորեր, հովիտ ու դաշտ  
Ծաղիկներով զուգուեցան.  
Սիրով նայեց երկինքն անհաշտ,  
Ցողեց արցունք բերկրութեան:  
Հեղաքնքոյշ բասն վարդեր,  
Կեանքը փթթեց ամեն տեղ.  
Ողի առան մատաղ սրտեր  
Քո քնարով սիրազեղ . . .

Անցան տարիք. մարդիկ ուսան  
Դիւթիչ երգիդ ամեն վանկ.  
Բայց քեզ, կեանքի անբախտ գուսան,  
Բաժին թողին լոկ զրկանք:  
Եւ դու լքուած՝ սիրտ ես յուզում  
Անուրջների անձնատուր.  
Տառապանքի ողբ ես հիւսում  
Սուրբ հանճարով երկնատուր:  
Հնչէ, գուսան, քո վեհ քնար,  
Զարկ լարերին սրտաթունդ.  
Կը մեղմանան սրտերը քար,  
Քեզ կը յիշէ նոր սերունդ . . .

Յ. Պետրոսեան

